Այլ դատական ծախսեր սույն գործով չեն կատարվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ, 109-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ, 270-րդ, 270.1-րդ և 360-362 հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. «Կառուպերֆուդ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ «Կառուպերֆուդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին Երևանի քաղաքապետի 01.02.2024 թվականի թիվ 381-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել:

Անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետի 01.02.2024 թվականի թիվ 381-Ա որոշումը, որով «Կառուպերֆուդ» ՍՊԸ-ին ներառել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2.Երևանի քաղաքապետարանից հօգուտ «Կառուպերֆուդ» ՍՊ ընկերության բռնագանձել 50.000 (երեսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումը ներկայացնելու համար հայցվորի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումար, ինչպես նաև՝ 80.000 (ութսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Մնացած մասով դատական ծախսերի բռնագանձման պահանջը մերժել:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան հրապարկվելու պահից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Լիլիթ Սաղոյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am